

3430



Ի. ՍՏԱԼԻՆ

ՃԱՌԻ ԽՍՀՄ ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՄԲԱՏՆԱՎԱՐՆԵՐԻ
ՈՒ ԿՈՄԲԱՏՆԱՎԱՐՈՒՇԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄ Կ(Բ) Կ ԿԵՆՏՐՈՄԻ ՅԵՎ ԿԵՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱՄՆԵՐԻ ՀԵՏ

1986 թ. գեկտեմբերի 1-ին



ՃԱՌԻ ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ՅԵՎ ԹՈՒՐԿՄԵՆՍՏԱՆԻ
ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՒՏՆՏԵՍԱԿՈՆՆԵՐԻ ՅԵՎ
ԿՈՒՏՆՏԵՍՈՒՇԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹՅԱՆԸ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՒՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՎԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

1986 թ. գեկտեմբերի 4-ին

3K33

Խ-33

Պ Ե Տ Ն Բ Ա Տ

ԳՐԱԴԱՐԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ ● 1939

27 JUN 2005
14 NOV 2000

3K33 *այ.*

6-33

Ի. ՍՏԱԼԻՆ

14 NOV 2000

ՃԱՌ ԽՍՀՄ ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՄԲՍՅՆԱՎԱՐՆԵՐԻ
ՌԻ ԿՈՄԲՍՅՆԱՎԱՐՈՒՂԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

1935 թ. դեկտեմբերի 1-ին



ՃԱՌ ՏԱՋԻԿՍՏԱՆԻ ՅԵՎ ԹՈՒՐԹՄԵՆՍՏԱՆԻ
ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ
ԿՈՒՏՆՏԵՍՈՒՂԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՂԵԿՍՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

1935 թ. դեկտեմբերի 4-ին

Պ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

12 FEB 2014

3430

ՃԱՌ ԽՍՀՄ ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՄԻՍՅՆԱՎԱՐՆԵՐԻ ՈՒ
ԿՈՄԻՍՅՆԱՎԱՐՈՒՀԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՅՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄ Կ(Բ) Կ ԿԵՆՏԿՈՒԹԻ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

1985 թ. դեկտեմբերի 1-ին



4041
39

И. СТАЛИН

РЕЧЬ НА СОВЕЩАНИИ ПЕРЕДОВЫХ КОМБАЙНЕРОВ И
КОМБАЙНЕРОК СССР С ЧЛЕНАМИ ЦК ВКП(б)
И ПРАВИТЕЛЬСТВА
1 декабря 1935 г.

РЕЧЬ НА СОВЕЩАНИИ ПЕРЕДОВЫХ КОЛХОЗНИКОВ И
КОЛХОЗНИЦ ТАДЖИКИСТАНА И ТУРКМЕНИСТАНА
С РУКОВОДИТЕЛЯМИ ПАРТИИ И ПРАВИТЕЛЬСТВА
4 декабря 1935 г.

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Ընկերներ: Թույլ տվեք ամենից առաջ վողջունել ձեզ այն նվաճումներին կապակցությամբ, վոր դուք ձեռք եք բերել բերքահավաքի ճակատում: Ձեր նվաճումները վորքը չեն: Յեթե ամբողջ ԽՍՀՄ մեջ մեկ կոմբայնի արտադրանքը միջին հաշվով մեզ մոտ մի տարվա ընթացքում յերկու անգամ ավելացել է, ապա այդ վորքը նվաճում չե: Այդ նվաճումն առանձնապես կարևոր է մեր յերկրի պայմաններում, վորտեղ տեխնիկապես կոփված մարդիկ դեռևս քիչ են: Մեր յերկիրը միշտ աչքի յե ընկել տեխնիկապես կոփված կադրերի պակասությամբ, մասնավորապես հողագործության ասպարիզում: Կադրերի տեխնիկական պատրաստում ամբողջ յերկրի շրջանակներում—այդ շատ մեծ գործ է: Այդ տասնամյակներ է պահանջում: Յեվ յեթե մենք համեմատաբար կարճ ժամկետներում յերեկվա գյուղացու տղաներից ու աղջիկներից այնպիսի հիանալի կոմբայնավարներ ու կոմբայնավարուհիներ պատրաստեցինք, վորոնք գերազանցում են կապիտալիստական յերկրների նորմաներից, ապա այդ նշանակում է, վոր մեզանում տեխնիկական կադրերի աճեցման գործը յոթ մղոնանոց քայլերով է առաջ դնում: Այն, ընկերներ, ձեր հաջողությունները նշանակալից են ու լուրջ, և դուք լիովին արժանի յեք այն բանին, վոր կուսակցության ու կառավարության ղեկավարները վողջունեն ձեզ: (Մալխահարություններ):

Իսկ այժմ թույլ տվեք անցնել գործի ելույթյանը: Մեզ մոտ հաճախ ասում են, թե մենք արդեն լուծել ենք հացահատիկի պրոբլեմը: Այդ, իհարկե, ճիշտ է, յեթե

նկատի ունենանք մեր ապրած այժմյան ժամանակա-
շրջանը: Այս տարի մենք ավելի քան հինգ և կես միլիարդ
փութ հացահատիկ ենք հավաքում: Այդ միանգամայն բա-
վական է, վորպեսզի կուշտ կերակրենք բնակչությանը և
զեռ ամեն տեսակ չնախատեոված զեպքերի համար անհրա-
ժեշտ բավականաչափ պաշար էլ հետ դնենք: Այս, իհարկե,
վատ չէ այսօրվա համար: Բայց մենք չենք կարող սահմա-
նափակվել միայն այսօրվա օրով: Մենք պետք է մտածենք
նաև վտղվա օրվա մասին, մերձավորագույն ապագայի մա-
սին: Իսկ յեթե գործին վաղվա տեսակետից նայենք, ապա
ձեռք բերած արդյունքները մեզ չեն կարող բավարարել:
Ինչքան հացահատիկ հարկավոր կլինի մեզ մերձավորագույն
ապագայում, ասենք՝ մի յերեք-չորս տարի հետո: Մեզ հար-
կավոր կլինի 7—8 միլիարդ փութ հացահատիկ: Ահա այս է
գործի զբաղմունքը, ընկերներ: Հետևաբար, մենք պետք է
հենց այժմ միջոցներ ձեռք առնենք, վորպեսզի հացահա-
տիկի արտադրությունը մեզ մոտ տարեցտարի աճի, և
վորպեսզի այդ ժամկետին մենք միանգամայն պատրաստ
լինենք այս կարևորագույն խնդիրն իրագործելու համար:
Հնում, մինչև հեղափոխությունը մեր յերկրում տարեկան
մոտավորապես 4—5 միլիարդ փութ հացահատիկ էր արտա-
դրվում: Այդ հացը բավականացնում էր թե վոչ—այս ուրիշ
հարց է: Համենայն դեպս բոլորը գտնում էյին, վոր բավա-
կանացնում է, քանի վոր ամեն տարի մոտ 400—500 միլիոն
փութ հացահատիկ էյին արտահանում արտասահման: Այս-
պես էր անցյալում: Այլ բան է այժմ, մեր խորհրդային
պայմաններում: Յես արդեն ասացի, վոր մենք սխտք է
այժմ արդեն պատրաստվենք այն բանին, վորպեսզի մեր-
ձավորագույն ապագայում, մի յերեք-չորս տարուց հետո
հացահատիկի արեկան արտադրությունը հասցնենք 7—8
միլիարդ փութ: Տարբերությունը, ինչպես ասում էք, փոքր
չէ: Մի գեպքում՝ չորս կամ հինգ միլիարդ փութ, մյուս
գեպքում՝ յոթ կամ ութ միլիարդ փութ հացահատիկ:
Վորակից է սաացվում այսպիսի տարբերությունը:
Ինչով բացատրել հացահատիկի պահանջի այսպիսի վիթ-
խարի աճումը մեր յերկրում:

Այդ բացատրվում է նրանով, վոր մեր յերկիրն արդեն
այն չէ, ինչ վոր հին, նախահեղափոխական ժամանակ էր:
Սկսենք թեկուզ այն բանից, վոր մեզ մոտ վերջին
տարիներում արդյունաբերությունն ու քաղաքներն առ-
նվազն յերկու անգամ աճել են հին ժամանակվա համեմա-
տությամբ: Այժմ մեզ մոտ քաղաքները, քաղաքների բնա-
կիչները, արդյունաբերությունը և արդյունաբերության մեջ
զբաղված բանվորներն առնվազն յերկու անգամ ավելի յեն,
քան հին ժամանակ: Այս ինչ է նշանակում: Այս նշանա-
կում է, վոր մենք գյուղից մի քանի միլիոն աշխատավոր
վերցրինք, քաղաքները փոխադրեցինք, բանվորներ ու ծա-
ռայողներ դարձրինք, և նրանք այժմ մնացած բանվորների
հետ միասին առաջ են շարժում մեր արդյունաբերությունը:
Այս նշանակում է, վոր յեթե առաջ գյուղի հետ կապված
միջանի միլիոն աշխատավորներ հաց էյին արտադրում,
ապա այժմ նրանք վոչ միայն հաց չեն արտադրում, այլ
ընդհակառակը, իրենք կարիք ունեն, վորպեսզի նրանց
համար գյուղից հաց բերեն: Իսկ քաղաքները մեզ մոտ
աճելու յեն և հացի պահանջն ավելանալու յի:

Հացահատիկի պահանջի աճման առաջին պատճառը
սա յի:

Այսուհետև: Հին ժամանակ մեզ մոտ տեխնիկական կուլ-
տուրաները քիչ էյին, քան այժմ: Մենք այժմ յերկու ան-
գամ ավելի բամբակ ենք արտադրում, քան հնում: Ինչ
վերաբերում է վուշին, ճահնդեղին և ուրիշ տեխնիկական
կուլտուրաներին, ապա մենք այդ կուլտուրաներն անհա-
մեմատ ավելի յենք արտադրում, քան հնում: Իսկ սրանից
ի՞նչ է հետևում: Իսկ սրանից հետևում է այն, վոր տեխնի-
կական կուլտուրաների արտադրությամբ զբաղված մար-
դիկ չեն կարող բավարար չափով զբաղվել հացի արտա-
դրությամբ: Հետևաբար, պետք է հացահատիկի ավելի մեծ
պաշար ունենալ այն մարդկանց համար, վորոնք տեխնի-
կական կուլտուրաներ են արտադրում, վորպեսզի կարելի
լինի հեղհետե ավելի ու ավելի շատացնել տեխնիկական
կուլտուրաների արտադրությունը, բամբակի, վուշի, ճա-
կընդեղի, արևածաղկի և այլ կուլտուրաների արտադրու-

թյունը: Իսկ տեխնիկական կուլտուրաների արտադրութիւնը մենք պետք է շարունակ ավելացնենք, յետեւ մենք ցանկանում ենք առաջ շարժել մեր թեթեւ արդյունաբերութիւնը և մեր սննդի արդյունաբերութիւնը:

Ահա ձեզ հացահատիկի պահանջի աճման յերկրորդ պատճառը:

Այնուհետև: Յետ արդեն ասացի, վոր հնում մեզ մոտ տարեկան 4—5 միլիարդ փութ հացահատիկ եյին արտադրում: Այն ժամանակ ցարական մինիստրները սովորաբար ասում եյին. «Ինքներս կուշտ չենք ուտի, բայց հաց կարտահանենք»: Այդ ինչ մարդիկ եյին, վորոնք կուշտ չեյին ուտում: Իհարկե, ցարական մինիստրները չեյին դրանք: Կուշտ չուտող մարդիկ — դրանք 20 — 30 միլիոն գյուղական չքավորներն եյին, վորոնք իսկապես կուշտ չեյին ուտում և կիսաքաղց եյին ապրում, վորպեսզի ցարական մինիստրներն արտասահման հաց արտահանելու հնարավորութիւն ունենան: Այսպես եր հնում: Հիմա մեզ մոտ բոլորովին ուրիշ ժամանակ է: Սորհրդային կառավարութիւնը չի կարող թույլ պալ, վորք քնակչութիւնը կուշտ չուտի: Ահա արդեն 2—3 տարի յետ, վոր մեզ մոտ այլևս չքավորութիւն չկա, դործադրիչութիւնը վերացել է, կուշտ չուտելն անհետացել է, և մենք ամուր վտաք ենք դրել ունեւորութիւն ուղին: Դուք կհարցնեք — ինչ յեղան 20—30 միլիոն սոված չքավորները: Նրանք անցան կոլտնտեսութիւնները, հիմնավորվեցին այնտեղ և հաջողութեամբ իրենց ունեւոր կյանքն են կառուցում: Իսկ այդ ինչ և նշանակում: Այդ նշանակում է, վոր այժմ աշխատավոր գյուղացիներին կերակրելու համար ավելի շատ հաց է պահանջվում, քան հնում, վորովհետև յերեկվա չքավորները, իսկ այժմ կոլտնտեսականները, վորոնք հաստատվել են կոլտնտեսութիւններում, պետք է բավականաչափ հաց ունենան իրենց ունեւոր կյանքը կառուցելու համար: Դուք գիտեք, վոր նրանք այդ հացն ունեն և ել ավելի յեն ունենալու:

Ահա հացահատիկի պահանջը մեր յերկրում հսկայական չափով աճելու յերրորդ պատճառը:

Այնուհետև: Մեզ մոտ հիմա բոլորն ասում են, վոր

աշխատավորների նյութական դրութիւնը նշանակալից չափով լավացել է, վոր կյանքն ավելի լավ, ավելի ուրախ է դարձել: Այս, իհարկե, ճիշտ է: Բայց որս հետևանքն այն է լինում, վոր քնակչութիւնն սկսել է շատ ավելի արագ բազմանալ, քան հնում: Մահացութիւնը պակասել է, ծնընդաբերութիւնն ավելացել է և զուտ աճն անհամեմատ ավելի շատ է ստացվում: Այդ, իհարկե, լավ է, և մենք այդ վողջուհում ենք: (Դախիմում ուրախ աշխուժութիւն): Այժմ մեզ մոտ քնակչութիւն տարեւան զուտ աճը մոտ յերեք միլիոն հողի յետ կազմում: Այս նշանակում է, վոր ամեն տարի մենք մի ամբողջ Ֆինլանդիայի չափ աճ ենք ստանում: (Ընդհանուր ծիծաղ): Ահա սրա հետևանքն այն է լինում, վոր մենք պետք է ավելի ու ավելի շատ մարդ կերակրենք:

Ահա ձեզ հացի պահանջի աճման ելի մեկ պատճառ:

Վերջապես ևս մի պատճառ: Յետ խոսեցի մարդկանց մասին և նրանց հացի պահանջի աճման մասին: Բայց մարդկանց պարենը լոկ միայն հացով չի սահմանափակվում: Նրանց հարկավոր է նաև միս, ճարպեղեն: Քաղաքների աճումը, տեխնիկական կուլտուրաների աճումը, ազգաբնակչութիւն քնակչութիւնն աճումը, ունեւոր կյանքը — այս բոլորի հետևանքը լինում է այն, վոր աճում է մսի, ճարպեղենի պահանջը: Հետևապես անհրաժեշտ է ունենալ լավ հիմքերի վրա դրված անասնապահութիւն մեծ քանակութեամբ մանր ու խոշոր անասուններով, վորպեսզի հնարավորութիւն ունենանք բավարարելու քնակչութիւն մասնաբերների աճող պահանջները: Այս բոլորը պարզ է: Բայց անասնապահութիւնն աճումն աներևակայելի յետ առանց անասունների համար անհրաժեշտ կերահատիկի խոշոր պաշարների: Միայն աճող և ծավալվող հացահատիկային տնտեսութիւնը կարող է անասնապահութիւնն աճման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել:

Ահա ձեզ հացահատիկի պահանջը մեր յերկրում հսկայական չափով աճելու ելի մեկ պատճառ:

Սրանք են, ընկերներ, այն պատճառները, վորոնք արմատապես փոխել են մեր յերկրի դեմքը և մեր առաջ

անհետաձգելի խնդիր են զնում՝ հացահատիկի տարեկան արտադրութեանը մերձավորագույն աղագայում հասցնել 7—8 միլիարդ փթի:

Արդյոք կարող ենք իրագործել այս խնդիրը:

Այո, կարող ենք: Այս մասին կատարած լինել չի կարող: Ի՞նչ է պահանջվում այս խնդիրն իրագործելու համար:

Իրա համար, ամենից առաջ, պահանջվում է, վոր անտեսութեան տիրապետող ձևը մեզ մոտ լինի վնչ թե մանր, այլ խոշոր անտեսութեանը: Ինչո՞ւ հատկապես խոշորը: Վորովհետև միայն խոշոր անտեսութեանն է ընդունակ յուրացնելու ժամանակակից տեխնիկան, միայն խոշոր անտեսութեանն է ընդունակ բավարար չափով ողտազործելու ժամանակակից ագրոտեխնիկական գիտելիքները, միայն խոշոր անտեսութեանն է ընդունակ, ինչպես հարկն է, պարարտացում կիրառելու: Կապիտալիստական յերկրներում, վորտեղ հողագործութեան մեջ տիրապետող ձևը անհատական մանր անտեսութեանն է, խոշոր անտեսութեաններն ստեղծվում են հողատերերի փոքրաքանակ խմբի հարստացման և դյուղացիների մեծամասնութեան քայքայման միջոցով: Այնտեղ քայքայվող դյուղացիների հողերը սովորաբար անցնում են հարուստ հողատերերի ձեռքը, իսկ դյուղացիներն իրենք, վորպեսզի սովից չմեռնեն, վարձկան են դառնում այդ հողատերերի մոտ: Այս ուղին մենք սխալ ու քայքայիչ ենք համարում: Այն մեզ համար անընդունելի չէ: Այդ պատճառով էլ մենք հողագործութեան մեջ խոշոր անտեսութեաններ կազմելու այլ ուղի չենք բռնել: Մենք բռնել ենք մանր-դյուղացեական անտեսութեանները համախմբելու և խոշոր կոլեկտիվ անտեսութեաններ կազմելու ուղին, անտեսութեաններ, վորոնք հողը մշակում են կոլեկտիվ աշխատանքով և վայելում են խոշոր անտեսութեան բոլոր բարիքներն ու հնարավորութեանները: Այդ կոլտնտեսութեանների ուղին է: Այժմ խոշոր անտեսութեան կոլտնտեսային ձևը մեզ համար, մեր հողագործութեան տիրապետող ձևն է արդյոք: Այո: Այժմ մեր կոլտնտեսութեաններում է ամբողջ դյուղացիութեան մոտավորապես 90 տոկոսը: Հետևապես, հողագործութեան մեջ խոշոր արն-

տեսութեանը, կոլեկտիվ անտեսութեանը վորպես տիրապետող ձև, — մեղանում արդեն առկա չէ:

Իրա համար, յերկրորդ, պահանջվում է, վոր կոլտնտեսութեանները, մեր խոշոր անտեսութեանները բավականաչափ պիտանի հող ունենան: Արդյոք մեր կոլտնտեսութեաններն այդպիսի հողեր ունեն: Այո, ունեն: Դուք գիտեք, վոր բոլոր ցարական, կալվածատիրական ու կուլակային հողերն արվեստահանձնված են կոլտնտեսութեաններին: Դուք գիտեք, վոր այդ հողերն արդեն ընդմիջտ ամբացված են կոլտնտեսութեաններին: Հետևաբար, կոլտնտեսութեանները բավարար չափով պիտանի հողեր ունեն նրա համար, վորպեսզի ամբողջ թափով ծավալեն հացահատիկի արտադրութեանը:

Իրա համար, յերրորդ, պահանջվում է, վոր կոլտնտեսութեաններն ունենան բավականաչափ տեխնիկա, տրակտորներ, դյուղատնտեսական մեքենաներ, կոմբայններ: Ինքներդ հասկանում եք, վոր միայն ձեռքի աշխատանքով հեռու չես գնա: Հետևապես, հարկավոր է հարուստ տեխնիկա, վորպեսզի կոլտնտեսութեանները կարողանան ծավալել հացահատիկի արտադրութեանը: Արդյոք կոլտնտեսութեաններն այդպիսի տեխնիկա ունեն: Այո, ունեն: Յե՛վ քանի գնա, նրանք այնքան ավելի շատ կունենան այդ տեխնիկան:

Իրա համար, վերջապես, պահանջվում է, վոր կոլտնտեսութեաններն ունենան տեխնիկան կիրառելու ընդունակ այդ տեխնիկան յուրացրած և այդ տեխնիկան թամբել սովորած մարդիկ, կադրեր: Արդյոք կոլտնտեսութեաններն ունեն այդպիսի մարդիկ, այդպիսի կադրեր: Այո, ունեն: Ճիշտ է, դեռ քիչ, բայց ասումամենայնիվ դրանք կան: Այս խորհրդակցութեանը, վորին ներկա չեն լավագույն կոմբայնավարներն ու կոմբայնավարուհիները և վորոնք կոլտնտեսութեանների ունեցած կոմբայնավարների ու կոմբայնավարուհիների բանակի մի փոքրիկ մասն են միայն, այս խորհրդակցութեանն ապացույց է այն բանի, վոր կոլտնտեսութեաններում այդպիսի կադրեր արդեն առաջ են յեկել: Ճիշտ է, դրանք, այդ կադրերը դեռևս փոքրաթիվ են, և այդ է, ընկերներ, մեր գլխավոր դժվարութեանը: Բայց

հիմք չկա կասկածելու, վոր այդ կադրերի քանակը մեզ մոտ վնչ թե տարիներով ու ամիսներով, այլ որերով ու ժամերով է անելու:

Դուրս է գալիս, այսպիսով, վոր մենք ունենք այն բուր սպայանները, վորոնք անհրաժեշտ են մեր ձավորագույն ազադատում տարեկան 7—8 միլիարդ փթի չափ հացահատիկ արտադրելու համար:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր այն անհետաձգելի խնդիրը, վորի մասին յես վերևում խոսեցի, անսպասման իրագործելի յե:

Այժմ գլխավորն այն է, վոր ուժ տանք կադրերին, կադրերին սովորեցնենք, հետ մնացողներին ոգնենք՝ յուրացնելու տեխնիկան, որեցոր անեցնենք այնպիսի մարդիկ, վորոնք ընդունակ են յուրացնելու տեխնիկան և այն առաջ քշելու: Այս է այժմ գլխավորն, ընկերներ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կոմբայնների և կոմբայնավարների վրա: Դուք գիտեք, վոր հացահատիկային անտեսություն մեջ ամենապատասխանատու գործը բերքահավաքն է: Բերքահավաքը սեզոնային գործ է և սպասել չի սիրում: Ժամանակին բերքը հավաքեցիր—շահեցիր, բերքահավաքն ուշացրիր—տանուլ ավիր: Կոմբայնի նշանակությունն այն է, վոր նա ոգնում է բերքը ժամանակին հավաքելուն: Այդ շատ մեծ ու լուրջ գործ է, ընկերներ:

Բայց կոմբայնի նշանակությունը դրանով չի սահմանափակվում: Նրա նշանակությունը նաև այն է, վոր մեզ ազատում է հսկայական կորուստներից: Ինքնիրդ գիտեք, վոր հնձիչով կատարված բերքահավաքը հացահատիկի հսկայական կորուստներ է տալիս: Սկզբում հնձել, հետո խըրձեր կապել, հետո դեզ գնել, հետո հնձածը տանել կալիչներին մոտ—այս ամենը կորուստներ են ու կորուստներ: Ամենքն ընդունում են, վոր բերքահավաքի այս սխտանով մենք կորցնում ենք բերքի մոտավորապես 20—25 տոկոսը: Կոմբայնի մեծ նշանակությունն այն է, վոր նա այդ կորուստները աննշան նվազագույնի յե հասցնում: Գործին տեղյակ մարդիկ ասում են, վոր հնձիչի ոգնությունը կա-

տարած բերքահավաքը, մնացած հավասար սպայաններում, հեկտարին 10 փութ սակաս բերք է տալիս, քան կոմբայնի ոգնությունը կատարած բերքահավաքը: Յեթե վերցնենք 100 միլիոն հեկտար հացահատիկային ցանք,—իսկ մենք, ինչպես հայտնի յե, դրանից անհամեմատ ավելին ունենք,—ապա հնձիչներով բերքահավաքի կորուստները կկազմեն մի միլիարդ փութ հացահատիկ: Փորձեցեք այժմ այդ 100 միլիոն հեկտարի բերքահավաքը կոմբայնի ոգնությունը կատարել, նկատի ունենալով, վոր կոմբայնը վատ չի աշխատում,—և դուք մի ամբողջ միլիարդ փութ հացահատիկ կշահեք: Ինչպես տեսնում եք, փոքր թիվ չէ:

Ահա թե վորքան մեծ է կոմբայնի և նրա վրա աշխատող մարդկանց նշանակությունը:

Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր կոմբայնը մեր հողագործություն մեջ արմատացնելը և կոմբայնավարների ու կոմբայնավարուհիների մեծաքանակ կադրեր անեցնելն առաջնահերթ խնդիր է:

Ահա թե ինչու, ավարտելով իմ խոսքը, յես կուզեյի ցանկություն հայտնել, վոր մեր կոմբայնավարներին ու կոմբայնավարուհիներին թիֆլս աճեր վնչ թե որեցոր, այլ ժամ առ ժամ, վոր նրանք կոմբայնի տեխնիկան սովորելով և այդ գործն իրենց ընկերներին սովորեցնելով, վերջապես իսկական հողթողներ դառնային մեր յերկրի գյուղատնտեսություն մեջ:

(Փոքորկալի, յերկարատև ծափահարություններ, վորոնք ովացիայի և բարձրաձայն «ուռա»-յի յեմ փախվում: Բացալիանչություններ տեղերից—«Կեցցե՛ք ռեբելի Ստալինը»):

Ելի մի յերկու խոսք, ընկերներ: Մենք այստեղ նախագահություն մեջ կամացուկ գրուցում եյինք մեր մեջ ու դտանք, վոր այս խորհրդակցություն մտանակիցներին պետք է լավ աշխատանքի համար ներկայացնել բարձրագույն պարզի, շքանշանի: Այս բանը, ընկերներ, մենք մտադիր ենք ամենամտիկ որերում իրագործել:

(Փոքորկալի, յերկարատև ծափահարություններ, կապեր՝ «ուռա»: Բացալիանչություններ — «Շնորհակալություն ընկեր Ստալինին»):

ՀԱՌ՝ՏԱԶԻԿՍՏԱՆԻ ՅԵՎ ԹՈՒՐԿՄԵՆՍՏԱՆԻ
ԱՌԱՋԱՎՈՐ ԿՈՒՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՒՏՆՏԵ-
ՍՈՒՇԻՆԵՐԻ ԽՈՐՀՐԻՒԿՑՈՒԹՅԱՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒ-
ԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ
ՀԵՏ

1935 թ. դեկտեմբերի 4-ին

Ընկերներ: Այս խորհրդակցութեան նախագահութեանն ինձ հանձնարարեց հայտարարել ձեզ յերկու բան:

Նախ՝ այն, վոր նախագահութեանը մտադրութեան ունի բարձր պարզելի՝ շքանշանի ներկայացնել այս խորհրդակցութեան բոլոր մասնակիցներին և մասնակցուհիներին՝ գերազանց աշխատանքի համար: (Յերկարատև և բուռն ծափահարութեամբ: «Ուու» աղաղակներ, բացակաչափայլումներ՝ «Կեցցե ընկեր Ստալինը»: Յերկարատև ուղեցիա և վողջույմի բացակաչափայլումներ կուսակցութեան ու կառավարութեան ղեկավարների հասցեյին):

Յերկուրդ՝ այն, վոր կառավարութեանը վորոշում է ընդունել՝ մեկական բեռնակիր ավտո տալ այստեղ ներկայացված յուրաքանչյուր կոլտնտեսութեանը և, խորհրդակցութեան մասնակիցներից յուրաքանչյուրին նվիրել մեկական պատեֆոն (ծափահարութեամբ)՝ պլաստիկաներով և ժամացույցներ՝ տղամարդկանց—զրպանի, իսկ կանանց՝ ձեռքի: (Յերկարատև ծափահարութեամբ):

Ամեն կողմից ինձ ասում են, թե յես մի բան պետք է ասեմ (բացակաչափայլումներ՝ ճիշտ է, ծափահարութեամբ): Ի՞նչ ասեմ: Ամեն ինչ ասված է:

Ըստ յերևութիւն, բամբակի գործը ձեզ մոտ առաջ կգնա: Այդ յերևում է այն ամենից, ինչ վոր տեղի յե ունենում մեզ մոտ: Մեզ մոտ կոլտնտեսութեաններն անում են, աշխատելու ցանկութեան կա, մեքենաներ կտանք, պարարտանյութ կտանաք, ամեն տեսակ ոգնութեան, վոր

անհրաժեշտ է,—ժողովուրդի նախագահ ընկ. Մոլոտովը արդեն հայտարարեց ձեզ դրա մասին,—ցույց կարվի: Հետևաբար ձեզ մոտ բամբակի գործն առաջ կգնա և ունեոր կյանքը ծախվում է:

Սակայն, ընկերներ, կա մի բան, վոր բամբակից ել ավելի կարևոր է:

Դա՛ մեր յերկրի ժողովուրդների բարեկամութեանն է: Այս խորհրդակցութեանը, ձեր ճառերը, ձեր գործերը վկայում են, վոր մեր մեծ յերկրի ժողովուրդների փոխադարձ բարեկամութեանն ամրապնդվում է: Այդ շատ կարևոր և նշանակալից է, ընկերներ: Հին ժամանակ, յերբ մեր յերկրում իշխանութեան գլուխ էյին կանգնած թագավորը, կապիտալիստները, կալվածատերերը, կառավարութեան քաղաքականութեանն այն էր, վոր մի ժողովուրդ՝ ուու ժողովուրդը, տիրապետող դարձնի, իսկ մյուս ժողովուրդներին՝ ստորադրյալ և ճնշված: Դա դազանային, դայլի քաղաքականութեան էր: 1917 թվականի հոկտեմբերին, յերբ մեզ մոտ ծավալվեց պրոլետարական մեծ հեղափոխութեանը, յերբ մենք տապալեցինք ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին, մեծ Լենինը՝ մեր ուսուցիչը, մեր հայրը և դաստիարակը՝ առաց, վոր այսուհետև չպետք է լինի վնչ տիրապետող, վնչ էլ ստորադրյալ ժողովուրդներ, վոր ժողովուրդները պետք է հավասար ու ազատ լինեն: Դրանով նա գերեզման դրեց հին, ցարական, բուրժուական քաղաքականութեանը և հռչակեց նոր, բոլշևիկյան քաղաքականութեանը՝ մեր յերկրի ժողովուրդների փոխադարձ բարեկամութեան մեր յերկրի ժողովուրդների փոխադարձ բարեկամութեան քաղաքականութեանը, յեղբայրութեան քաղաքականութեանը: Այդ ժամանակից ի վեր անցավ 18 տարի: Յեղ անա մենք արդեն ունենք այդ քաղաքականութեան բոլոր արդյունքները: Այս խորհրդակցութեանը փայլուն ապացույց է, վոր արդեն վաղուց վերջ է տրված ԽՍՀՄ ժողովուրդների նախկին փոխադարձ անվստահութեանը, վոր անվստահութեանը փոխարինվել է լիակատար փոխադարձ վստահութեամբ, վոր ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամութեանն անում ու ամրապնդում է: Այդ, ընկերներ, ամենա-

արժեքավորն և այն բանից, վոր տվել և մեզ բուշուկյան
ազգային քաղաքականութիւնը:

Իսկ ԽՍՀՄ ժողովուրդներն փոխադարձ բարեկամու-
թիւնը մեծ, լուրջ նվաճում և, վորովհետև քանի վոր այդ
բարեկամութիւնը զոյութիւն ունի, մեր յերկրի ժողո-
վուրդներն ազատ և անպարտելի կլինեն: Վոչ վոք սարսա-
փելի չե մեզ համար՝ վնչ ներքին, վնչ ել արտաքին թշնա-
միները, քանի դեռ այդ բարեկամութիւնը կա և սպրում ե:

Կարող եք չկասկածել դրանում, ընկերներ:

(Ինչու՞ ովացիա: Ինչո՞ւ Արկա գտնվողները վառփի յեն
կանգնում. բացականչութիւններ՝ «Ուսմ Ստալինին»):

«Ирарда» № 335 (6581) 1935 ք. դեկտեմբերի 6-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՃ

Ճառ ԽՍՀՄ կոմբայնավարների ու կոմբայնավորուհիների խոր-
հրդակցութեանը ՀամԿ(Կ)Կ Կենտկոմի և կառավարութեան ան-
դամների հետ

Ճառ Տաջիկստանի և Թուրքմենստանի առաջվոր կողանտես-
կանների և կողանտեսուհիների խորհրդակցութեանը կուսակ-
ցութեան և կառավարութեան ղեկավարների հետ

12



Հայերեն թարգմանության խմբագիր Բ. Ն. Դավթյան
Տեխ. խմբ. Ա. Խաչատրյան
Սրբազբիչ Վ. Զիգեջյան
Կոնսրոլ սրբազբիչ Լ. Արսվյան

Գլավլիտի լիազոր № 2493, հրատ. № 719,
Պատվեր № 162, տիրաժ 5.000, թղթի չափեր 84×110¹/₃₂
(32.550 տպ. նիշ 1 տպ. մամուլում) 1 տպ. մամուլ, 1/2 թերթ թուղթ
Հանձնվել է արտադրության 16 VI 1939 թ.
Ստորագրվել է ավագընդու 27/VII 1939 թ.
Գինը 25 Լ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,
Յերևան, Ալլանիկերդյան № 65

«Ազգային գրադարան



NL0179149